

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



230, Գեկտեմբեր 2017թ. No 230, December 2017 شماره ۲۳۰ دی ماه ۱۳۹۶

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստանի Հանրապետություն.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	4
4- Միյուոք.....	4
5- Միջազգային.....	8
6- Հասարակական.....	8

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....	0-4
Աղվանք, Ադրբեջան.....	4-5

Շապիկի առաջին էջում՝ Մասունցի դավիթ

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 230, Դեկտեմբեր 2017 No. 230, December 2017

ماهنامه لویس - شماره ۲۳۰ دی ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Դարախանյան, Վահիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկղ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغدادساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: **louys_monthly@yahoo.com**

نشانی اینترنت: **www.louysonline.com**

Մոսկվայի Կլոր սեղանը

2017թ. դեկտեմբերի սկզբին Մոսկվայում տեղի է ունեցել Իգորրոգյան ակումբի «Կլոր սեղանը» նվիրված Լեռնային դարաբաղի պրոբլեմին:

Մասնակցել են ռուս գործիչներից միյն նրանք, ովքեր Դարաբաղի հարցում պաշտպանում են Ադրբեջանին, ինչպես նաև Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչներ:

Իգորրոգյան ակումբն օգտվում է լայն հեղինակությունից, բայց ցավալիորեն մեր քաղաքագետները, որոնք միայն Հայաստանի լրատվամիջոցներով են խոսում Դարաբաղի պաշտպանության օգտին, կարևոր չեն համարում մասնակցել այդ ակումբում քննարկվող հարցերին և դրա միջոցով ռուս և եվրոպական լսարանին հասցնել Դարաբաղի հարցի օբյեկտիվ պատմությունը:

Այսպես, Ռուսական տեռուստատեսության հայտնի մեկնարան Մաքսիմ Շևչենկոն չէր հայտարարի, թե «Իմ տեսակետով պատմական ճշմարտությունն Ադրբեջանի կողմն է»:

Մասնակիցներից «**Ռուսաստան-մահմեդական աշխարհ**» ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի նախագահ Շամիլ Սուլթանովն ասել է հետևյալը. Դարաբաղի հակամարտության լուծումով շահագրգռված են նաև Թեհրանի որոշակի խմբեր: Դրա հետ միասին Թեհրանն ունի հատուկ հարաբերություններ Հայաստանի հետ՝ Եվ առաջին հերթին Դաշնակցության հայկական գործալ ցանցի միջոցով: Այս կառույցին Իրանական կողմն օգտագործում է այն բանի համար, որպեսզի իր տեսակետը հասցնի արևմտյան որոշակի շրջանակներին»:

Իսկ Իգորրոգյան ակումբի ղեկավար, «**Չավորա**» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ, գրող Ալեքսանդր Պրոխանովն ասել է հետևյալը. «**...Բանակցությունները, որ վարվում են Հայաստանի և Եվրոմիության միջև կիսափակ ձևաչափով /իսկ այդ բանակցությունների նպատակն է Եվրոպային, եվրոպացիներին ներքաշել որպես մի նոր խաղացող այդ փխրուն աշխարհում/, դրանք ապակայունացնում են հենց իրավիճակը: Եվրոպան, ինչպես մենք հասկանում ենք, զալիս է ռուսական ազդեցության գոտի ոչ թե այն բանի համար, որպեսզի խաղաղություն հաստատի, այլ այն բանի համար, որպեսզի իրականացնի ոչ կառուցողական ակցիաներ, որովհետև Եվրոմիությունը հանդիսանում է Ռուսաստանի ստրատեգիական հակառակորդ: Ինչպե՞ս կդասավորվեն Ռուսաստանի և ժամանակակից Եվրոպայի հարաբերությունները: Դա սանկցիաներն են, իսկ Եվրոմիության թիկունքում թաքնված է ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպությունը: Եվ ենթադրաբար Եվրոպայի մտները Դարաբաղյան կոնֆլիկտի խորքը, ընդհանում է նրան, և իհարկե, թուլացնում է Ռուսաստանի դերը»:**

Հայաստանի Հանրապետություն

ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցությունը զարգանում է բնականոն. Մերժ Սարգսյան



Նախագահ Մերժ Սարգսյանն այսօր ընդունել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Ռուդ Գոթեմյոլերին, ով Հայաստան է ժամանել մասնակցելու «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումներին:

Ողջունելով հյուրին՝ Հանրապետության Նախագահը կարելուրել է Հայաստանում ավանդաբար անցկացվող «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումների շարքը՝ լայն հասարակությանը Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների մասին պարբերաբար իրազեկելու տեսանկյունից: Նախագահ Սարգսյանը գոհունակությամբ է արձանագրել, որ Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Հայաստանի համագործակցությունը զարգանում է բնականոն եւ շնորհակալություն է հայտնել ՆԱՏՕ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող աջակցության համար: Օգտվելով հանդիպման առիթից՝ Հանրապետության Նախագահը խնդրել է իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգին նրա պաշտոնավարման ժամկետի երկարաձգման առթիվ:

Զրուցակիցները երկուստեք ջերմությամբ են հիշել իրենց նախորդ հանդիպումները՝ 2011 թվականին, երբ Ռուդ Գոթեմյոլերը ԱՄՆ պետքարտուղարի օգնականն էր եւ դրանից հետո՝ ս.թ. փետրվարի 27-ին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում Գլխավոր քարտուղար Ստոլտենբերգի հետ հանդիպման ժամանակ:


Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններից բացի հանդիպմանն անդրադարձ է եղել Հայաստանի արտաքին եւ անվտանգային քաղաքականությանը, տարածաշրջանային զարգացումներին եւ այդ համատեքստում ԼՂ հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին: ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալը Հանրապետության Նախագահից հետաքրքրվել է նաեւ Սահմանադրության փոփոխություններից հետո Հայաստանում կառավարման նոր համակարգի անցնելու կապակցությամբ իրականացվող գործընթացներով:

Ռուդ Գոթեմյոլերը շնորհակալություն է հայտնել Հայաստանին այն վճռական ու հետեւողական աջակցության համար, որ իրականացնում է միջազգային խաղաղապահ գործողություններին ակտիվ մասնակցությամբ՝ իր կարելուր ներդրումն ունենալով

միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման գործում:

ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալը գոհունակությամբ է խոսել Հայաստանի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) իրականացման մասին՝ նշելով, որ հաջողությամբ իրականացվել է չորս ծրագիր, եւ արդեն հաստատվել է Հայաստան-ՆԱՏՕ 2017-2019թթ. հինգերորդ ծրագիրը:

Հայտնաբերվել է Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցների տարհանման տեսարաններով 25 լուսանկար. Հայկ Դեմոյան



Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ջանքերով հաջողվել է հայտնաբերել մինչ օրս անհայտ շուրջ քսանհինգ նոր լուսանկար՝ Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցներին ֆրանսիական ռազմանավերի միջոցով տարհանելու տեսարաններով: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը՝ դա անվանելով բացառիկ հայտնագործություն:

Հայտնաբերված բնօրինակ լուսանկարներն արվել են 1915 թվականի սեպտեմբերին, ֆրանսիական ռազմածովային նավատորմի սպայի կողմից: Լուսանկարները ներկայացնում են նավակներով խաղաղ հայ բնակչությանը դեպի ռազմանավեր տեղափոխելու գործողությունները, նավերի տախտակամածին նրանց տեղավորումն ու այլ տեսարաններ:

Նորահայտ բնօրինակ այս լուսանկարները հանրությանը կներկայացվեն 2018 թ. ապրիլին»,-ընդգծել է Դեմոյանը:





Հայաստանը TESLA-ի հետ քննարկում է կուտակիչ կայանների ծրագիրը. նախարար



Հայաստանը TESLA-ի հետ քննարկում է կուտակիչ կայաններ կառուցելու ծրագիրը: Այդ մասին «168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբան, B4B.am հարթակի հիմնադիր Բարկեն Թունյանին տված հարցազրույցում հայտնել է Կապի, տրանսպորտի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աշոտ Մանուկյանը:

Իսոսելով ներդրողների ակումբի ծրագրերի մասին՝ նախարարը նշել է. «Առաջինը, որի մասին բազմիցս ասել ենք, Շնող ՀԷԿ-ի ծրագիրն է, որը նախնական գնահատականներով կկազմի 150-200 մլն դոլար, դա խորհրդային ժամանակներից ի վեր չկառուցվող հեկ էր, որի նախագծումը սկսվել է դեռ խորհրդային ժամանակներում, բայց խորհրդային պետությունը չկարողացավ նույնիսկ ավարտել կամ նույնիսկ սկսել շինարարությունը:

Երկրորդ, արդեն սկսել ենք նախահաշվարկային աշխատանքները կոշտ թափոնների վերամշակումից էլեկտրաէներգիայի ստացման կայանի կառուցման համար: Ծրագիրը դեռ նախագծային, նախահաշվարկային փուլում է, բայց նախնական գնահատումներով՝ կկազմի 60-80 մլն դոլար, ընդ որում՝ սա կլինի Կոտայքի եւ Սեւանի տարածաշրջաններում պիլոտային ծրագիր: Այն հետո կտարածվի մնացած բոլոր մարզերում»:

Ըստ Մանուկյանի, ներդրողների ակումբի ծրագրերից շատ կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանում առաջին արդյունաբերական նշանակության արեւային կայանի կառուցումը: Իր տեսակի մեջ լինելով եզակի՝ այն խթան հանդիսացավ, եւ դրանից 6 ամիս անց Հայաստանում հայտնվում են նոր արեւային կայաններ:

«Մի կարևոր հանգամանք էլ նշեմ, այդ տիպի կայանների կողմից արտադրվող էներգիայի ծավալների մեծացմանը

զուգահեռ՝ ի հայտ է գալիս այդ էլեկտրաէներգիան կուտակելու անհրաժեշտություն: Հակառակ դեպքում մենք պետք է արտադրենք ու կորցնենք, քանի որ հնարավորություն չունենք այդ պահին սպառելու: Եվ հենց դրա հետ է կապված ներդրողների ակումբի հաջորդ ծրագիրը, որն այս պահին քննարկվում է TESLA-ի հետ, զուգահեռ՝ նաեւ այլ արտադրանքի հետ. փորձում ենք նաեւ կառուցել կուտակիչ կայաններ: Առաջին պիլոտայինը կլինի Դոմաշենում՝ մինչեւ 15 մեգավատտ հագորությանը կուտակիչ կայանի կառուցում: Սրա նախնական արժեքը 15-17 մլն դոլար է: Այս 4 ծրագրերն արդեն ընթացքի մեջ են, նախագծային, նախահաշվարկային փաստաթղթերի մշակման փուլում են», - ասել է նախարարը:

Իսկ վարչապետ Կարեն Կարապետյանը նշել է. «Եթե մեզ հաջողվի իրականացնել այս վերջին ծրագիրը, դա սկզբունքորեն կփոխի մեր էներգետիկ անվտանգությունը: Թեպետ էներգետիկ անվտանգության տեսակետից մեր երկիրն առանց այն էլ Եվրոպայի պետությունների մեծամասնությունից շատ ավելի անվտանգ է, այսինքն՝ Ֆորսմաժորային պայմաններում գազի մատակարարում, եւ այլն: Ինչպես պարոն Մանուկյանն ասաց՝ արեւային էներգետիկայի զարգացումը կունենար սահման, եթե մենք կուտակիչ ակումբային կայանների խնդիրը չենք լուծում, որովհետեւ ռեակտիվ հզորության սպառման խնդիր կա»:

Հարցին, իսկ այս կուտակիչների ծրագիրը չի՞ հակասում «Գազարմի» շահերին, վարչապետը պատասխանել է. «Ոչ, շուկա է: Ամեն մեկը պետք է փորձի շուկային արձագանքել: «Գազավիկները» պետք է մտածեն՝ ոնց են իրենց վաղվա օրը կառուցելու»:

Սաթիկ Սեյրանյանն ընտրվեց Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ



Հայաստանի ժուռնալիստների միության 12-րդ համագումարն այսօր՝ դեկտեմբերի 28-ին, բաց քվեարկությամբ Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ ընտրվեց «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր, «Արմենիա» հեռուստարկերության «Ռ-Էվոլյուցիա» հաղորդաշարի հեղինակ եւ վարող Սաթիկ Սեյրանյանը:

Համագումարի ժամանակ Սաթիկ Սեյրանյանի օգտին քվեարկեց միության 57 անդամ, եւս մեկը դեմ քվեարկեց: Ինքնառաջադրվել էր նաեւ երիտասարդ լրագրող Հարություն Շատրյանը, որն ընդամենը 3 տարի առաջ էր անդամակցել միությանը եւ Միության կանոնադրության համաձայն իրավունք չունի թեկնածու, սակայն նիստը վարող Նադաշ Մարտիրոսյանն անտեսեց այդ փաստը եւ քվեարկության դրեց նաեւ նրա թեկնածությունը: Հարություն Շատրյանը հավաքեց զրո ձայն:

Նշենք, որ համագումարն անցավ բավականին լարված մթնոլորտում: Ներկաներից շատերը պնդում էին, որ համագումարի անցկացումն անօրինական է, իրենք զանգով են իմացել դրա մասին եւ նույնիսկ օրակարգը չունեն:

«Ոչ մեկս պատվիրակ չեմք, զանգել, կանչել են, այս ամենն օրենքի շրջանակում չէ: Ինչո՞ւ ենք Գրողների միությունում անում մեր համագումարը, ինչո՞ւ ենք մեր Միության շենքը վարձով տվել», - հայտարարեց Լավրենտի Միրզոյանը:

Հարություն Ծատրյանը նույնպես նշեց, որ սոցիալական ցանցից է իմացել համագումարի մասին, ապա հետաքրքրվեց, թե ինչու է այդքան քիչ մարդ եկել: Հետաքրքրական է, որ Աստղիկ Գեւորգյանը նույնիսկ Միության անդամների իրական թիվը չգիտեր, հետեւաբար, պարզ չէր, թե անդամների քանի տոկոսն է ներկա այսօրվա համագումարին:

Հիշեցնենք, որ Հայաստանի ժուռնալիստների միությունը արդեն 40 տարի (1977 թվականից) ղեկավարում է Աստղիկ Գեւորգյանը: 1997 թվականից ի վեր Միությունը համագումար չէր անցկացրել:

Ծուրջ 10-15 րոպե տեւած սուր բանավեճից հետո Նաղաշ Մարտիրոսյանին վերջապես հաջողվեց թեկնածուներ առաջադրելու մասին հայտարարել: Մարտիրոսյանն շտապում նիստն ավարտել 1,5 ժամում, քանի որ այդքան ժամանակով էին վարձակալել դահլիճը. նա մոռացավ առաջադրումից հետո թեկնածուներին ձայն տալ:

«Սաթիկ Մեյրանյանին բոլորն էլ ճանաչում են, ի՞նչ ձեւականությունների հետեւից ենք ընկել, ով Սաթիկ Մեյրանյանին չի ճանաչում, իր խնդիրն է», - ասաց նա:

Չնայած սրան, Սաթիկ Մեյրանյանն ու Հարություն Ծատրյանը ելույթ ունենալու իրավունք ստացան եւ ծրագրային դրույթները ներկայացրին: Միության նախագահի քվեարկությունից հետո շատերը հեռացան դահլիճից, չնայած որ վարչության կազմն էլ պետք է ընտրվեր:

Մահացել է ճարտարապետ Ռուբեն Հասրաթյանը



Երկարատեւ հիվանդությունից հետո՝ 74 տարեկանում մահացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետ Ռուբեն Հասրաթյանը:

Ռուբեն Հասրաթյանը ծնվել է 1943 թ. սեպտեմբերի 24-ին, Երեւանում: Նա պետական եւ հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի որդին է:

1967 թվականին ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1967-1972 թվականներին աշխատել է «Երեւաննախագիծ», 1972-1991 թվականներին եւ 1997 թվականից՝ «Հայպետնախագիծ» (1980-1991 թթ. եւ 1997 թվականից)՝ ճարտարապետության արվեստանոցի

ղեկավար) ինստիտուտներում, 1991-1997 թթ.՝ Երնորոգնախագիծ ինստիտուտի տնօրեն:

Ռուբեն Հասրաթյանի համահեղինակային նախագծերով իրականացվել են Կապանի թիվ 5 եւ թիվ 6 թաղամասերի կառուցապատումը (1981-1986), Գյումրիի (1982), Երեւանի «Էրեբունի» (1983, Սոֆիայի «Բինալե-87» մրց.) օդանավակայանները, Երեւանի թեթեւաթելակայի ծածկած մանեժը (1977), կազմվել Ստեփանավան քաղաքի վերականգնման գլխավոր հատակագիծը (1989) եւ Ջորազետի ձախափնյա կառուցապատման նախագիծը (1989-1991):

Երիտասարդ ճարտարապետների ստեղծագործության (1977), «Տարվա լավագույն կառույց» (1984) համամիութենական ստուգատեսների դափնեկիր է:

Ռուբեն Հասրաթյանը 2004 թվականին Երեւանում տեղադրված Գրիգոր Հասրաթյանի հիշատակի հուշաքարի ճարտարապետն է, նաեւ 2008 թվականին Երեւանում տեղադրված Վիլյամ Մարոյանի հուշարձանի ճարտարապետներից մեկը:

Նա 2012 թվականին Երեւանում տեղադրված «Վարք հավերժության» քանդակի ճարտարապետն է:

Կյանքից հեռացել է գրականագետ Ֆելիքս Մելոյանը



Դեկտ. 15, 2017: Կյանքի 77-րդ տարում մահացել է Հայաստանի գրողների միության անդամ, գրականագետ Ֆելիքս Մելոյանը: Լրագրողների հետ զրույցում այս մասին հայտնեց Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը: «Մահվան պատճառը երկարատեւ հիվանդությունն էր», - նշեց Միլիտոնյանը:

Ֆելիքս Մելոյանը 1962 թվականին ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1962-1964 թվականներին եղել է «Մետալուրգ» թերթի պատասխանատու քարտուղարը: 1964-1968 թվականներին աշխատել է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում որպես կրտսեր գիտաշխատող: 1966-1971 թվականներին եղել է «Գրական թերթի» քննադատության բաժնի վարիչը, 1971-1978 թվականներին «Գրական թերթի» խմբագրի տեղակալը: 1978 թվականի օգոստոսից եղել է «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը: 1996-2001 թվականներին եղել է ՀԳՄ վարչության քարտուղար: ՀԳՄ «Նորք» հանդեսի խմբագիրն է:

Մավր Դավթյան. եզակի համբերատար պետական գործիչը

21:19 28 դեկ. 2017




Մահացել է Մավր Դավթյանը

20:22 27 դեկ. 2017

88 տարեկանում մահացել է հայտնի իրավաբան ու պետական գործիչ Մավր Դավթյանը: Դեկավարել է խորհրդահայ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեն, 20 տարի եղել է Կոմկուսի կենտրոնի անդամ, նորանկախ Հայաստանի Առողջապահության նախարարության իրավախորհրդատուն: Մավր Դավթյանի հոգեհանգիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 28-ին Սուրբ Հովհաննես եկեղեցում, հուղարկավորությունը՝ դեկտեմբերի 29-ին:

Արևմտյան Հայաստան

Պոլստ հայոց պատրիարքի տեղապահը հայտարարություն է տարածել Երուսաղեմի հետ կապված



Պոլստ հայոց պատրիարքի տեղապահ արք. Գարեգին Բեքյանը անհանգստություն է հայտնել Երուսաղեմի շուրջ տեղի ունեցող զարգացումների հետ կապված: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արք. Բեքյանի հայտարարության մեջ նշվել է, որ Պոլստ հայոց պատրիարքարանում անհանգստությամբ են հետևում Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու Թրամփի որոշումից հետո միջազգային լարվածությանը:

«Կրոնական առումով աշխարհի եւ մարդկության ժառանգ հանդիսացող Երուսաղեմը քաղաքական գործիք դարձնելը քրիստոնյաներին, այդ թվում եւ հայ եկեղեցուն ավելի է անհանգստացնում: Անհրաժեշտ է բոլոր կողմերի ջանքերը, որ միաստված կրոնների համատեղ սրբավայր հանդիսացող Երուսաղեմը վնաս չստանա»,-նշվել է հայտարարության մեջ: Նշենք, որ Պոլսից հետո հայ եկեղեցու 2-րդ պատրիարքարանը գտնվում է Երուսաղեմում: Հայ եկեղեցին Երուսաղեմում համաքրիստոնեական սրբավայրերում մեծ իրավունքներ ունի:

Թուրքիայի Մալաթիայում 2 հազար տարվա հնության կարաս են հայտնաբերել



Թուրքիայի Մալաթիա նահանգում գյուղացիներից մեկը այգում 2 հազար տարվա կարաս է հայտնաբերել: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Մալաթիայի Դողանշեհիրի շրջանի գյուղերից մեկում գյուղացին այգին ջրելու ժամանակ նկատել է, որ ջուրը մի անկյունում միանգամից ներքեւ է իջնում: Նա սկսել է փորել եւ կավի խոշոր կտորի հանդիպել: Գյուղացին հասկացել է, որ հնագիտական իր է հայտնաբերել եւ զանգահարել է տուրիզմի եւ մշակույթի վարչություն: Գյուղացու փորած վայրը ժամանած հնագետները նշել են, որ հայտնաբերվել է 2 հազար տարվա հնություն ունեցող կարաս: Թե ինչ նպատակներով է կարասը օգտագործվել, դեռ հայտնի չէ:

Միյուռք

Պետք է պայքարել Թուրքիայում սեփականության վերադարձի, գործարքների սառեցման համար. Հայ արքեպիսկոպոսը՝ «Ինջիրլիքի» մասին

«Նրանք, ովքեր այրում են սրբավայրերը, մարդ արարած էլ կայրեն». այս բառերով է ռաբբի Արթուր Շենյդերը բացել սրբավայրերի առգրավմանը նվիրված քննարկումը, հաղորդում է «Ամերիկայի ձայնը»: Վաշինգտոնում անցած կրոնական ազատության միջազգային խորհրդաժողովի շրջանակներում Արդարադատության եւ մարդու իրավունքների հայկական

իրավական կենտրոնի գործադիր տնօրեն Քեյթ Նահապետյանը ներկայացրեց Հայոց ցեղասպանության տարիներին Թուրքիայում առգրավված հայերի, հույների եւ ասորիների սեփականության պատմությունը:



Նահապետյանի խոսքով, Հայոց ցեղասպանությունը եզակի էր նաեւ այն առումով, որ առաջին անգամ սեփականությունն առգրավվում էր հատուկ ընդունված պետական օրենքների շրջանակներում. «Ավերելով համայնքը, զրկելով մարդկանց սեփականությունից, նրանց տկարացնում էին, իսկ բռնագրավելով նրանց սրբավայրերը՝ նրանց զրկում վերադառնալու հնարավորությունից»:

Ստեղծված պայմաններում, Նահապետյանի խոսքով, մնում է պայքարել այդ սեփականության վերադարձի կամ էլ առնվազն՝ դրա շուրջ բոլոր գործարքների սառեցման համար: Ի դեպ, մինչեւ Ցեղասպանությունը հայկական սեփականություն հանդիսացող հողերի վրա է գտնվում նաեւ թուրքական Ինջիրիքի օդանավակայանը, որը Թուրքիան տրամադրում է Միացյալ Նահանգներին, նշում է Եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ Վիգեն արքեպիսկոպոս Այկազյանը. «Մենք այդ երկրում երբեք սոսկ փոքրամասնություն չենք եղել. Մենք Կոնստանդնուպոլսի, Փոքր Ասիայի եւ Անատոլիայի բնիկ ժողովուրդ ենք»:

Միայն Անատոլիայում մինչեւ Ցեղասպանությունը գործում էր 2600-ից ավելի հայկական եկեղեցի եւ վանք, հիշեցնում է արքեպիսկոպոս Այկազյանը: Այսօր գործում է միայն Աղթամար կղզու եկեղեցին, այն էլ՝ տարին միայն մեկ օր:

Հիշեցնենք, որ Թուրքիան չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը եւ հրաժարվում է որեւէ սեփականություն վերադարձնել:

«Վերջին 10 տարիների ընթացքում մենք փորձել ենք Թուրքիայի իշխանությունների հետ կապ հաստատել իրավաբանների միջոցով, սակայն՝ ապարդյուն»:

Որեւէ աջակցություն չեն ստանում քրիստոնյաները նաեւ Եգիպտոսում, Իրաքում եւ Քրդստանում, ավելացնում է Վիգեն արքեպիսկոպոս Այկազյանը. «Եգիպտոսի նախագահ Միսիի, կամ Իրաքի վարչապետի, կամ Քրդստանի առաջնորդ Բարզանիի հետ հանդիպումների ընթացքում նրանք բոլորը խոսքով մեզ աջակցում են, սակայն՝ ոչինչ չեն անում: Ցավոք, նման պայմաններում, 10-15 տարի անց Իրաքում այլեւս որեւէ քրիստոնյա չի մնալու»:

Իրավիճակը հնարավոր է փոխել միայն նոր քայլերի շնորհիվ, նշում է արքեպիսկոպոսը, հակառակ դեպքում, այն հողում, որտեղ ծնվել է քրիստոնեությունը, այլեւս քրիստոնյա չի մնա:

Վրացահայ առաջին կին տիեզերագնացը NASA-ի պարզեւի է արժանացել



NASA-ի տիեզերագնաց Հայդի Ֆայֆերը Վրաստանի քաղաքացիական ավիացիայի առաջին եւ դեռեւս միակ կին տիեզերագնաց 25-ամյա Նադեժդա Բենքյանին պարզեւատրել է ԱՄՆ դեսպանատան «Կանացի լիդերության եւ խիզախության» պարզեւով: Այս մասին հայտնում է «Sputnik Գրուզիան»:

Պարզեւատրման արարողությունը կայացել է Վրաստանի Ավիացիայի համալսարանում, որի շրջանավարտ է նաեւ Բենքյանը: Դրա հետ մեկտեղ, Տիեզերագնացության եւ տիեզերքի ուսումնասիրության ազգային գործակալության (NASA) տիեզերագնացը հանդիպել է նաեւ ուսումնարանի ուսանողների հետ եւ կիսվել իր փորձով:

Ֆայֆերը ոչ միայն 1993 թվականից NASA-ի տիեզերագնաց է, այլեւ ԱՄՆ նավատորմի կապիտան: Տիեզերագնացն առաջին անգամ տիեզերք է դուրս եկել 2006 թվականին:

«Սա ինձ համար մեծ պատիվ է, բացի այդ, այս պարզեւը հանձնել է շատ կարեւոր անձնավորություն: Ես հիացած եմ նրանով: Սա այնպիսի անհավանական զգացում է, երբ այդպիսի մեկը հիացած է քեզով: Պարզվում է, նա ցանկացել է օդաչու դառնալ, բայց տեսողության հետ կապված խնդիրների պատճառով չի կարողացել», - ասել է Բենքյանը «Sputnik Գրուզիային»:

Մի քանի ամիս առաջ Բենքյանը սկսել է աշխատել «Georgian Airways» վրացական ավիաընկերությունում եւ օրինակ է դարձել այն բանի, որ կինը կարող է կատարել տղամարդու գործ, եւ ապացուցել, որ ինքնաթիռը կառավարել նրա մոտ ավելի վատ չի ստացվում, քան տղամարդկանց:

Ստամբուլում տեղի է ունեցել վերանորոգված հայկական եկեղեցու օծումն ու բացումը

Ստամբուլի Քուրուչեշմեյի Երեւման Սուրբ Խաչ եկեղեցին իր դռներն է բացել հավատացյալների առաջ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Երեւման Սուրբ Խաչ եկեղեցին օծել է Պոլսոս հայոց պատրիարքարանի կրոնական խորհրդի առաջնորդ, եպիսկոպոս սահակ Մաշայանը: Իր խոսքում Սահակ Մաշայանը նշել է, որ անհրաժեշտ է տեր կանգնել հայ համայնքի համար մեծ կարեւորություն ներկայացնող եկեղեցիներին: «Պետք է մեր եկեղեցիները բաց պահենք ու աղոթենք: Եկեղեցիները հասարակության սիրտն են: Ես այսօր այստեղ տեսնում եմ նաեւ Սուրբ Խաչ դպրեվանքի

ասներին: Ցանկանում եմ նրանց տեսնել նաև ամեն կիրակի պատարագների ժամանակ», - ասել է եպիսկոպոս Մաշայանը:

Այնուհետ խոսքով հանդես է եկել եկեղեցու հիմնադրամի անդամ Սարո Բենքիյանը, եւ եկեղեցու վերանորոգմանը ֆինանսական աջակցություն ցույց տվողներին շնորհակալություն հայտնել:

Իրանի նախագահը հայկական երկու ընտանիքի է այցելել



Իրանի նախագահ Հասան Ռոհանին կիրակի երեկոյան հայկական երկու ընտանիքի է այցելել քրիստոնեական Սուրբ Ծնունդյան տոնի կապակցությամբ: Նրա այցելած ընտանիքների որդիները՝ Էդվին Շահմիրյանը եւ Ժորժ-Քելիշ Հարությունը գոհվել են 1980-ականներին Իրանի եւ Իրաքի միջև տեղի ունեցած երկարատև պատերազմի ընթացքում: Հասան Ռոհանիի այցելությունների մասին տեղեկատվությունը, լուսանկարները տեղադրված են Իրանի նախագահի պաշտոնական կայքում:

«Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, իրանա-իրաքյան պատերազմում գոհված Էդվին Շահմիրյանի ընտանիքում շնորհավորելով Սուրբ Ծնունդը, Հասան Ռոհանին ասել է, որ Իրանի ժողովուրդը գնահատում է պատերազմի նահատակների հավատարմությունն ու ինքնագոհությունը եւ հարգանքով լի է նրանց ընտանիքների հանդեպ: Շահմիրյանների ընտանիքում Հասան Ռոհանին ասել է, որ այս օրերը ուրախություն են Իրանի ամբողջ ժողովրդի եւ աշխարհի համար, հատկապես «մեր հայ եւ քրիստոնյա քաղաքացիների համար, եւ ես ուրախ եմ այցելություն կատարելով այս երեկո», - նշել է Իրանի նախագահը:

Արձագանքելով Էդվին Շահմիրյանի մոր ուրախությանը, շնորհակալությանը, որ Իրանի նախագահը այցելել է իրենց ընտանիք, Ռոհանին ասել է. - «Մա մեր պարտքն է, ամենաքիչը, որ կարող ենք անել նահատակների սիրելի ընտանիքների համար: Դուք ձեր որդուն նվիրել եք պաշտպանելու երկիրն ու Իրանի ժողովրդին, եւ անկասկած բարձր տեղ ունեք Ամենակարողի կողքին»:

Ռոհանին ասել է, որ Իրանի ժողովուրդը միշտ գոհ է իր հայ քաղաքացիներից, նրանց համարում է «վստահելի, աշխատասեր եւ ազնիվ քաղաքացիներ, որոնք սիրում են իրենց երկիրը»:

Կրոնական դավանանքի առումով իսլամական հանրապետության նախագահ, դոկտոր Ռոհանին ասել է, որ «Իրանի ժողովուրդը Հիսուս Քրիստոս մարգարեին, Մուհամադ մարգարեին, Նոյ մարգարեին, Իբրահիմ մարգարեին եւ Մովսես մարգարեին համարում է մեծ մարգարեներ, որոնք օրհնություն եւ բարօրություն են բերել մարդկությանը»:

Ժորժ-Քելիշ Հարությունի ընտանիքում շնորհավորելով Սուրբ Ծնունդը՝ Ռոհանին ասել է, որ «Հիսուս Քրիստոսի բնույթը եւ ուսմունքը կարող են մարդկությանը բերել խաղաղություն եւ համատեղ խաղաղ գոյակցություն»: Ողջունելով պատերազմի նահատակների ընտանիքների ինքնագոհությունը եւ համբերությունը, Հասան Ռոհանին ասել է, որ Իրանի ամբողջ ժողովուրդը պաշտպանում է սիրելի նահատակների արյունը, որոնք իրենց կյանքը գոհաբերելով պաշտպանել են Իրանի հողը:

Ռոհանին ընդգծել է, որ Իրանում բոլոր կրոններն ու էթնիկ խմբերը ուրախությունների կամ տխրությունների օրերին կանգնած են կողք-կողքի: «Մեր ժողովուրդը միշտ կողք-կողքի է եղել ու կշարունակի այդպես մնալ», - ասել է նա: Իրանահայ երկու ընտանիքներ այցելությունների ժամանակ Հասան Ռոհանիին ուղեկցել է նահատակների եւ վետերանների հարցերով փոխնախագահը, ով նաև գոհվածների ընտանիքներին հուշագրեր է հանձնել:



Մինգապուրի հայերը ցանկանում են իրենց ավանդն ունենալ երկրի մշակութային ժառանգության պահպանման գործում



News Asia սինգապուրյան գործակալությունը հրապարակել է երկրի փոքր հայ համայնքի ոչ նյութական ժառանգությանը, այդ թվում՝ մշակույթի ու սովորույթների պահպանմանը նվիրված լայնածավալ հոդված:

Հողվածում նշվում է, որ այս պահին համայնքը բաղկացած է ընդամենը 60 մարդուց, որոնք տոներին հավաքվում են տեղի հայկական եկեղեցում:

Հայ համայնքը Մինգաչուրի ոչ նյութական մշակութային ժառանգության օրինակներից մեկն է: Հաջորդ տարվա ապրիլին երկիրը նախատեսում է սկսել երկրի մշակութային, այդ թվում՝ ոչ նյութական ժառանգության պահպանման ծրագիր: Ծրագիրը ներառում է համապատասխան ցուցակի կազմում, եւ այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի դատին հանձնելը:

Այս իմաստով հայ համայնքը ակնկալում է, որ իր ձայնը եւս լսելի կլինի: Գեւորգ Սարգսյանի եւ նրա կնոջ գլխավորած հայկական համույթը տարվա ընթացքում մի քանի համերգներով է հանդես եկել: Սարգսյանը հույս ունի, որ հայկական թանգարան եւ պատկերասրահ կբացվի այստեղ: «Մենք քիչ ենք, բայց մենք մեր ներդրումն ենք կատարում պատմությանը մեջ: Այն տեսանելի կամ ճանաչված չէ, բայց կա», -ասել է Սարգսյանը:

Թբիլիսիում Թանդոյանց Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու հարցը պետք է համայնքը որոշի. Վիրահայոց թեմի առաջնորդ



Թբիլիսիի Թանդոյանց Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու հետ կապված հարցը Հայաստանի նախագահին է ներկայացվել ընդհանուր համատեքստում, սակայն այս հարցի կարգավորմամբ պետք է զբաղվի Վրաստանի հայ համայնքը: Այս մասին Թբիլիսիում լրագրողների հետ զրույցում ասել է Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի առաջնորդ Վազեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Նրա խոսքով՝ Վրաստանում հայկական ժառանգության հետ կապված խնդիրները պետք է լուծի հայ համայնքը եւ հասնի նրան, որ հայկական պատմական եւ մշակութային հուշարձաններին վնաս հասցնողները պատժվեն:

«Մեր դիրքորոշումը հետեւյալն է՝ մենք չենք ցանկանում, որ Սուրբ Էջմիածինը եւ Երեւանը զբաղվեն Վրաստանում հայկական մշակութային ժառանգության պահպանման հետ կապված խնդիրներով: Այս իրավիճակը կարող է միջպետական եւ միջեկեղեցական խնդիրների հանգեցնել: Հետեւաբար՝ այդ հարցով պետք է զբաղվի Վրաստանում հայ համայնքն ինքը», - նշեց Միրզախանյանը:

Եպիսկոպոսը հայտնեց, որ եթե Թանդոյանց եկեղեցու հետ կապված հարցը մինչեւ ընթացիկ տարեվերջ չլուծվի, ապա հայ համայնքը Վրաստանի կառավարությանը դատի կտա,

ինչպես նաեւ հարցի լուծմանը կներգրավի միջազգային կառույցներին:

Հիշեցնենք, որ 2017 թվականի հուլիսին Վրաստանի կառավարությունը Թբիլիսիում Թանդոյանց Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 19-րդ դարում, հանձնել է Վրաստանի Պատրիարքարանին:

Ավելի վաղ այս թեմայով Վրաստանի Տոլերանտության եւ բազմազանության ինստիտուտը հողված էր պատրաստել, որում մասնավորապես նշված էր. «2017 թվականի հուլիսին Վրաստանի կառավարությունը Վրաց ուղղափառ եկեղեցուն է հանձնել վնասված եկեղեցի, որը գտնվում է Թբիլիսիում Ադմաշենեբելի 38 հասցեում, եւ նրան հարող տարածքը: Սակայն մինչեւ դա, պետությունը չի ուսումնասիրել տաճարի ծագումը եւ նրա մշակութային ու կրոնական նշանները, մինչդեռ Պատրիարքարանն արդեն եկեղեցում տարբեր տեսակի աշխատանքներ է իրականացնում»:

Պոլստ Հայոց պատրիարքարանը խստորեն քննադատել է Արամ Աթեշյանին



Պոլստ Հայոց պատրիարքարանը պաշտոնական հայտարարություն է հայոց-պատրիարքութենելու սարանությի/ տարածել՝ անդրադառնալով Արամ արք. Աթեշյանի՝ Երեւանում արած հայտարարություններին:

«Այսպիսով հայտնի դարձած է թե ճշմարտությունները խեղաթյուրելու, գործընթացին մոտ չկազմնած անձանց խաբելու իր նախաձեռնությունները, որ հանախիս տեսնում ենք Թուրքիայում, կշարունակեն անցնել երկրի սահմաններից: Արամ Արքեպիսկոպոսի նման վարմունքը պատշաճ չէ անհատին, մանավանդ եկեղեցականին», - ասվում է հայտարարության մեջ:

«Արամ Արքեպիսկոպոսը պնդում է, թե Թուրքիայի Հանրապետության համար ինքը դեռ Պատրիարքական Փոխանորդ է, քանի որ պետությունը չի ճանաչում այժմյան տեղապահին: Տեղապահի ընտրությունը մեր եկեղեցու ներքին հարցն է: Կը կատարվի ըստ կարգ ու կանոնների եւ ավանդությունների: Ուստի մարտի 15-ին Եկեղեցական Համագումար Ժողովի գումարմամբ կայացած ընտրությամբ, որի թեկածունեից մեկն էլ ինքն էր, տեղապահն ընտրվել է ըստ կանոնի: Իր առաջին պարտականությունն էր հարգանքով ընկալել ընտրության արդյունքը ու խուսափել՝ մեր եկեղեցու մանավանդ այսպիսի տագնապալի ներքին մեկ հարցը հրապարակային եւ խեղաթյուրիչ արտահայտություններով բանավեճի նյութ դարձնելուց»:

Պոլստ Հայոց պատրիարքարանը խստորեն քննադատել է Արամ Աթեշյանի հայտարարությունները՝ մեկ առ մեկ անդրադառնալով դրանց:

Միջազգային

Թուրքական համալսարանի պրոֆեսորը իջեցրել է Ադրբեջանի դրոշը եւ պահանջել հետ վերադարձնել Հայաստանի դրոշը



Թուրքիայի Բուրսա քաղաքի Ուլուդաղի համալսարանում Հայաստանի եւ Ադրբեջանի դրոշների հետ կապված սկանդալ է առաջացել:

Ուլուդաղի ադրբեջանցի ուսանողները հայտարարել են, թե դեկտեմբերի 5-ին նկատել են, որ Ադրբեջանի դրոշը բացակայում է համալսարանի առջեւից: Համալսարանում նրանց պարզաբանել են, թե դրոշների նորացում է տեղի ունենում եւ մեկ շաբաթ անց նոր դրոշ կտեղադրվի:

Մեկ շաբաթ անց ադրբեջանցի ուսանողները տեսել են, որ դեռ դրոշը չկա, համալսարանի ղեկավարությանը հայտնել են, որ ցանկանում են իրենց ուժերով կախել Ադրբեջանի դրոշը:

Սակայն դրոշների հարցերով պատասխանատու, իսլամի պատմության դասախոս, պրոֆեսոր Մալիհ Փալը ադրբեջանցի ուսանողներին ասել է, որ օրեր առաջ անհետացել է Հայաստանի դրոշը եւ կասկածը հենց ադրբեջանցիների վրա, եւ եթե նրանք վերադարձնեն Հայաստանի դրոշը, պրոֆեսորը կկախի նաեւ Ադրբեջանի դրոշը:

Ադրբեջանցիները հաջորդ օրը որոշել են գնալ համալսարան եւ ինքնուրույն կախել իրենց երկրի դրոշը, սակայն նրանք շատ են զարմացել, երբ տեսել են մեծ թվով ոստիկանական մեքենաներ համալսարանի բակում:

Ադրբեջանցի ուսանողները ստիպված համալսարանից դուրս են բողոքի ակցիա իրականացրել:

Այս թեման մեծ արձագանք է գտել միայն ադրբեջանական մամուլում:

Հասարակական

«Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս». Գիրք այն մասին, թե ինչպես են պետական ծրագրով ոչնչացնում հայկական հուշարձանները

2017 թվականի սկզբին «Հայկական ճարտարապետության հետազոտությունների հիմնադրամը» «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս» վերնագրով գիրք է հրատարակել այն մասին, թե ինչ է պատահել հայկական պատմամշակութային հուշարձանների հետ, որոնք գտնվում են ժամանակակից Ադրբեջանի տարածքում: Այս մասին 2017 թվականի ամփոփիչ մամուլի ասուլիսում ասաց հիմնադրամի ղեկավար, հուշարձանագետ Մամվել Կարապետյանը:

Նրա խոսքով՝ գրքի վերնագիրն արդեն խոսում է դրա բովանդակության մասին. գրքում ներկայացված է, թե ինչպես են պետական ծրագրով զինված ուժերի կիրառմամբ

անցած 2 տասնամյակում ոչնչացվել Ադրբեջանի տարածքի հայկական հուշարձանները: «Այս ամենը տեղի է ունեցել այն նույն սցենարով, ինչ 1940-ական թվականներին Թուրքիայում»,- ասաց նա:




Գրքում ներկայացված են տեղանքի մանրամասն քարտեզներ, լուսանկարներ, որոնցում երևում է, թե հուշարձանն ինչպիսի տեսք է ունեցել մի քանի տարի առաջ, եւ ինչպիսի տեսք ունի հիմա: Գրքի մեջ է ընդգրկված նաեւ Շամխորի շրջանի Գոլիցինո գյուղի ռուսական եկեղեցին, որը նույնպես ավերված է:

Մասնագետը հավելեց, որ գիրքը հրատարակվել է 3 լեզվով՝ Ադրբեջանին դիմակազերծ անելու նպատակով, որը փորձում է աշխարհին ներկայանալ որպես քաղաքակիրթ երկիր:


«Մա իսկապես քարոզչական իմաստով Ադրբեջանի դիմակը պատռող մի հատոր է, որը ցույց է տալիս, թե ինչ հակամշակութային երկիր է Ադրբեջանը, եւ ինչ ծայրահեղական, վանդալական վերաբերմունք ունի հատկապես հայ մշակույթի նկատմամբ»,- ասաց նա:

Գրքի տպաքանակը 1000 օրինակ է, մոտ 40 օրինակ հիմադրամը նվիրել է ՀՀ ԱԳ նախարարությանը: Հիմնադրամից ԱԳՆ-ն գնել է եւս 60 օրինակ: Մամվել Կարապետյանի խոսքով՝ առաջին անգամ է այսպիսի բան լինում, որ ԱԳՆ-ն իրենցից գիրք գնի քարոզչական նպատակով:

Գրքի հրատարակման հովանավորն է «Մոնարխ» ընկերությունը, որին գտել է Քաղաքաշինության կոմիտեի ղեկավար Նարեկ Մարգարյանը:



Հատուած Ստեփան Մապահ-Գիւլեանի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ հատորից



ՀՈԳԵԶՄԱՅԼՈՒԹԵԱՆ ՔԱՂՅՐ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐՈՒԹՅԱՆ.- Դա 1895ի վերջերը, այն օրերումն էր, երբ ամեն թույլ սպասում էր Մայիս 11ի Ծրագրի վերջնական ձևի ընդունելությանը, ստորագրությանը եւ գործադրությանը: Լորդ Սոլգորին իր յաւելումական առաջարկը բերել էր խնդիրը կարգադրուելու վրայ էր: Դեռ Բերլինից արտաքոյ կարգի «Օսմանեան Գերման» պատուիրակութիւնը Պետերբուրգ գնացած չէր, – սուր հակամարտութիւններ, չեզոքացումի ճիգեր տեղի չէին ունեցած, եւ խօսքը անգղիական դիւանագիտութեանն էր, որ վարում էր ընդհանուր համաձայնութիւնը:

Դա կեանքի մի վարդաստան էր, անե՛զր, անսահման, հազարաւոր անուրջներով լի:

Այդ օրերի մէջ՝ կա՛ր մէկը, որ յեղափոխական չիներ. ո՛վ իրեն Ս. Դ. Հնչակեան չէր համարում. ո՛րն էր անժպիտը. ո՛ր հոգին էր, որ անո՛յշ, քա՛ղցր գմայլանքների մէջ չէր ընկած եւ ինքն իրեն հպարտ չէր գգում՝ իր Ազգովը, իր Հայ լինելովը:

Մակընթացութեան վայրկեաններ, երբ սաստիկ փոթորիկներից յետոյ՝ նաւակը բարձրանում էր դէպի վեր, դէպի անքոյթ նաւահանգիստ:

Ուրեմն կատարու՞մ էր, իրականանո՞ւմ էր այն, ինչ որ պատանեկութեան օրերի երազն էր, – ինչ որ օդի, բարձունքների, անսահմանութեան մէջն էր փնտռվում: Վերջապէս գալի՛ս էր ոգի, նա մարմի՛ն էր առնում Հայաստանի լեռներից, ձորերից, աղբիւրներից, ծառ ու ծաղկունքներից: Մեր նախահայրերի թողած անանց յիշատակները, ուրեմն՝ անօգուտ վկաններ չէի՛ն եղած. մեր անհուն տառապանքը, ցաւը, վիշտը, թափած արիւնը, երկնէլ, պողպատե՛ր՝ էին...

«Տղաքս, աշխատեցէ՛ք, ուժ տուէք, ջանք մի՛ խնայէք. վաղը Հայաստանը կ'ազատի, Հայրենիքը, Ազգը ձեզ պէտք պիտի ունենայ, չէ՛ որ պետական լեզուն հայերէնը պիտի լինի. դէ՛հ, ձե՛զ տեսնեմ, ամբարեցէք, իւրացրէք այդ աստուածային լեզուի գանձերը, ինչքան շատ սովորիք՝ դարձեալ սովորելիք կայ, նա

անսպա՛ն գանձ է, ճիգ թափեցէ՛ք, կարդացէ՛ք, կարդացէ՛ք եւ ձեր երջանկայիշատակ նախահայրերի թողած անգին գանձի վրայ գմայլեցէ՛ք...»: Սա էր շարունակական յորդորը Հայկաբանութեան ուսուցիչ՝ Մկրտիչ Պալեանի, դեռ 1879ին:

Դա այլևս պատանեկան վառ երեւակայութեան սահմանի մէջը չէ՛ր:

Ու «Չայն տուր, ո՛վ ծովակ»ի անուրջը իրականանալու վրայ՝ էր: Կարելի՞ էր հոգեզմայլութեան մէջ չընկնել, այդ օրերում:

Հեւալով՝ ներս վագեց, Մերաստացի, դերձակ, համայն հոգի, ջիղ ու նետրոյ կազմող մեր ընկեր Արտաշէսը: Ու պոռակ, ճչակ, հեկեկալով, թոչկոտելով. – «Ընկէ՛ր, խենթանամ պիտի, խենթանամ... Հայաստանը ազատուի պիտի... ազատ Հայաստան պիտի ունենանք, մեզ իշխանութիւն կուտան... խենթանամ պիտի, խենթանամ...»:

Ու խեղճ ընկերը՝ ինքը իրենից դուրս եկած թէ՛ արտասուում, թէ՛ պարում էր:

-Արտաշէս, փոխանակ խենթանալու, խելքդ պահիր ազատ Հայաստանի համար, դուն պէտք պիտի գաս, ասում եմ:

-Չէ, ընկեր, չէ, խենթանամ պիտի... չեմ դիմանար, խենթանալ կուգայ...:

Սա մի նմոյշ հոգեկան վիճակ էր:

Պարիզի անգղիական ճիւղի՝ մամուլի սէնդիկատի անդամ էի: Լոնտոնի «Դէյլի Քրօնիկլ»ի թղթակից, Պրն. Մակտօնայաթը, որպէս երիցագոյն անդամ եւ նախագահ, հեռագրով կանչած էր յայտնելու, որ իրենց հրահանգուած է Հայկական վեց նահանգների Բարձր Քննիչի (Քոմիսէրի) համար՝ պաշտպանել իշխան Վալդեմարի թեկնածութիւնը ու հարցնում է՝ «Հայերը, ձեր Կուսակցութիւնը ուրիշ մէկը ունի՞...»:

Երջանի՛կ թուպներ:

Մի երկու օր յետոյ՝ հեռագիր եմ ստանում Պրն. Դընի Կօշէնից. նա ուզում է գիտնալ թէ ո՛վ է այն Հայ մարդը, որ բոլոր Հայերի համակրութիւնն ու վստահութիւնն ունի եւ կարող է Հայկական վեց նահանգների Բարձր Քննիչի պաշտօնի համար թեկնածու ներկայացնուիլ, քանի որ Մայիս 11ի Ծրագիրը շատ յաջող ելքի յանգելու վրայ է:

Պատասխանում եմ, որ այդ մասին դեռ Կուսակցական որոշում չունենք. բայց ամենից աւելի հաւանականն է Նուբար Փաշան:

Ու հարց է գնում թէ, Նապոլէոնի տան անդամներից մէկին Հայերը կ'ուզէի՞ն:

Անմոռաց ժամեր:

Տնքտնքալով՝ մեզ մօտ է գալիս, մի օր, Ջունդ ասպետը, մեզ աւետում է, որ Հայաստանի համար Իշխան ընտրելու վրայ են: Յայտնում է, «որ Ն. Վ. Նուբար Փաշան չի ուզեր, որ իր թեկնածութիւնը յառաջ մղուի, այլ իր որդու, Պօղոս Փաշայի»:

Ոգևորութիւնը ամեն տեղ է. նա իր գագաթնակէտին է հասած: Ու այդ հոգեզմայլութեան թուպներում վայելեցինք հոգեկան մի հրճուանք, երջանկութիւն, որ միշտ անմոռանալի, անկեղծ կը մնայ:

Չգիտեմ թէ ի՞նչ զգացին մեր հերոս ընկերները, երբ Ս. Դ. Հնչակեան թրի տակից շարան-շարան անցան Թուրք զինուորները՝ Չեյթունի բերդի անձնատուութեան ժամանակ: Բայց առանց հոգեկան լինելու՝ մի՞թէ կարելի չէ զգալ նրանց հոգւոյ խաղաքը:

Ի՞նչ կը լինի հոգին մի յամառ յաղթողի, երբ իր թշնամուն՝ տապալուած, ծունկի վրայ, իր առաջը չորած կը տեսնի: – Դա Հայ Տիգրանների, Արտաշէսների՞ն միայն պէտք էր հարցնել:

Ու այդ վայելեցի՛նք, վայելեցի՛նք՝ ճոխաբար:

«Իտտիհատ»ականները եկան մեզ տեսնելու. այս անգամ գլուխնին կախ, ընկնում...

Ո՛վ է թափանցել, կարդացել, հայելու վրայ առել Թուրքի հոգին, երբ նա Հային պէտք ունի, նրա օգնութեան անհրաժեշտութիւնն է գգում: Այդ թուպին նրա քծնանքը, շողորթութիւնը,

ժամանակակիցությունները բնորոշիչ, յատկանշական, ինքնուրույն, ցեղային չեն: Ո՛վ կեանքի այդ պատկերը տեսած է, նա միայն կ'ըմբռնի այդ վայրկեանը՝ ուր որ ենք, դեմ դիմաց:

«Դոքտոր»՝ Նազըմը ժպտում էր, բայց թոյն էր, բայց հարկ էր տեսնում ժպտալ, որովհետև պետք է որ ժպտար...

Ու սասցին. «Վերջապես առաք, բարի՛ վայելում, դարձեալ՝ որպէս եղբայրներ՝ միասին պիտի լինինք: Դուք Պետություն արեւելյան թումբը պիտի կազմէք եւ մեր ընդհանուր վերածնունդի օրինակը, պատճառը դառնաք... Էլ մոռանանք մեր կրօնները...» – Երջանիկ ականջներ որ այդ բառերը լսեցին: Մ'իս, դա ինչո՞ւ միշտ չլինէր:

Յետաշրջությունն ոգին տիրեց, րեակցիան եկաւ... Էլ կա՞ր մէկը, որ երէկուայ իր սիրածին, իր պաշտածին չքարկոծէր, նրան դժբախտության պատճառ չքոնէր:

Ո՛վ էր, որ Ս. Դ. Հնչակեաններին հալածելը, հայիոյելը իր ազգային պարտականությունը չէր համարում:

Հոգեկան վիճակ, որ յարատեւ, անբաժան, մնայուն է սահմանափակ, անպատրաստ, չկազմակերպուած ուղեղների, բնաւորությունից, ինքնուրոյնությունից գուրկ անհատների եւ հաւաքական մարմինների համար:

Այդ էլ եկաւ, տեսանք, շօշափեցինք, ճաշակեցինք: Բարցրությունը առանց դառնությունն չի լինիլ, – ասում են:

ԱՆՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՄ. -Յետաշրջականությունը, րեակցիան թագաւորում էր. մտքերի մէջ տիրող պոտորությունը ընդհանուր էր: Հայկական Դատը թէեւ որոշ չափով շարունակում էր եւրոպական դիւանատները զբաղեցնել, բայց Համիդի կառավարությունը արդէն յաջողել էր գորաւոր կռուաններ յառաջ բերել եւ նրանց վրայ յենուելով՝ իր ընդդիմադրությունը ուժեղացնել:

Տեղի ունեցաւ Կ. Պոլսոյ «Օսմանեան բանկայի դէպքը», 26 Օգոստոս 1896: Հեռագիրը հասաւ Պարիզ, երեկոյան թերթերը «Դէպքի» գլխաւոր գծերը պատմելով՝ ամենաբուռն յարձակումները գործեցին Հայերի դէմ: Եկաւ եւ ահեղի կոտորածի բօթը: Մի քանի օրից յետոյ՝ «Բանկան կոխողների» Մարսէլի բերուիլը հարորդուեցաւ: Հայկական կոտորածը հետզհետէ տարածուիլ սկսեց: Ֆրանսիական թերթերը, մանաւանդ կաշառուածները՝ կատաղի թոյն էին թափում, մեղադրելով Հայերին, որ նրանք՝ այս անգամ Թուրք կառավարությունը թողած՝ սկսել են Եւրոպացիների գոյքերին եւ ապահովութեանը ձեռք գարկել. չէր արտայայտուում ո՛չ մի արգահատանք՝ դէպի կոտորուողները: Ընդհակառակը՝ շատերի թէզն էր՝ ուժեղացնել Թուրք կառավարութեան ձեռքը որպէսզի նա կարող լինէր այդպիսի «դէպքերի» կրկնությունն արգիլել:

Դուրսինը ճմլիչ էր. հարկաւոր էր գործել: Ժընէւից, այդ դառն օրերի մէջ, Դաշնակցականները Պարիզի Ս. Դ. Հնչակեանների օգնությունն էին խնդրել: Դաշնակցականները եկան մեզ գտան: Տեղի ունեցաւ ընդհանուր խորհրդակցություն. գծուեցաւ անմիջական անելիքը:

Բայց ի՞նչ բացատրություն տալ, ինչո՞ւ, ի՞նչ նպատակով էին Դաշնակցականները «Բանկան» մտել, որո՞նք էին «Դէպքը» յառաջացնող պատճառները, ի՞նչ արդարացում. սրանք նախ ճշտել պետք էին, որովհետեւ Միւնիխի Բէլը եւ իր տրամադրութեան տակ եղող թերթերը ամենասեւ գոյներով էին նկարագրում «Դէպքը» եւ պարզապէս ասում էին, որ նա ռուսահայ ոչնչականների մի ձեռնարկն էր, բնական կողոպտելու եւ եւրոպացիներից վրէժ առնելու՝ իրենց միւս երկրների անիշխանական ընկերների համար, եւ այլ տաքը տեսակ ավերացփեղություններ:

Դաշնակցական ներկայացուցիչը եւ իր ընկերները որոշեալ մի լուրջ պատճառաբանություն ներկայացնել չկարողացան: Ժողովրդականներից ոմանք առաջ բերեցին «Եւրոպական շահերը խանգարելու» տեսությունը. բայց դա ո՛չ միայն

անբաւարար, այլեւ սխալ համարուեցաւ, աչքի առաջ ունենալով՝ որ մի դրամատան, առ առաւելն գանձի եւ պաշտօնեանների ոչնչացումովը՝ Եւրոպական շահերը չէին կարող վտանգուել՝ ընդարձակ Թուրքիայի մէջ, ուր այդ շահերը ամէն տեղ էին:

Իրաւ է, Ս. Դ. Հնչակեաններն էլ ժամանակին գործ են ածել «Եւրոպական շահերի խանգարումի» տեսությունը, որ Հայկական Դատը եւ նրա բազուկը ներկայացնող Հայ Յեղափոխությունը պիտի գար Հայաստանից եւ Հայ Ազգից քաղաքական այնպիսի նոր գոյացություններ ստեղծելու, որ Եւրոպական Պետությունները՝ նոյնիսկ իրենց քաղաքական եւ տնտեսական շահերի տեսակետով՝ աւելի լաւ պիտի համարէին Հայ քաղաքական Մարմնի վրայ յենուելու, քան Թուրք, որ արդէն մեռնում էր եւ չէր կարողանում ժամանակակից Կեանքի բարդ պահանջներին յարմարուելու:

Ժամանակին Ֆրանսիայի Արեւելյան քաղաքականությունն էր յենուել Լեհերի վրան, բայց յետոյ նրանց թողնելով՝ կրօնել սկսաւ ճիշդ հակառակորդ կողմի՝ Ռուսների վրան: Շատ առաջ՝ 15 եւ 16րդ դարերում, Անգլիան բարեկամ էր Ռուսաստանին՝ ընդդէմ Թուրքիայի. վերջը՝ իր քաղաքական կողմանցոյցը հակառակ ուղղութեան վրայ դրեց. եւ այսպէս շատ օրինակներ՝ որ պատմութեան մէջ պակաս չեն թէ՛ հին եւ թէ՛ նոր ժամանակներում: Իսկ այդպիսի մանր դէպքերով, Եւրոպական չնչին գումարների ոչնչացումով՝ ո՛չ միայն «Քաղաքական դէպք» չէր յառաջանալ եւ Եւրոպական շահերի հաւասարակշռութեան նժարը դէպի Հայերը չէր հակիլ, այլ՝ ընդհակառակը. նրանք աւելի կը միանային Թուրք կառավարութեան հետ, նրան ուժ կը տային, այդպիսի «մանր դէպքեր» իր սաղմի մէջ հետեւանքների մասին էլ կա՛մ լուռ հանդիսատես լինելու եւ կա՛մ ձեռքի տակից հաւանություն տալու, որով՝ կողմնակի կերպով, ծուռ ճանապարհով, այդ ուղղութեամբ գնալով՝ մենք աւելի մեր թշնամու շահերին եւ թէզին ծառայած կը լինէինք, քան մեր: Եւ արդէն, ֆրանսիական թերթերից շատերը այդ ոգով էին սկսել արտայայտուիլ:

